



ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ՝ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն Սյունիքի մարզ քաղաք Կապան

Երկու հազար տասնհինգ թվականի ապրիլի տասնմեկին

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆԻ ԶԱՐԱԶԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ, այսուհետև «ՎԱՐՉԱՏՈՒ», ի դեմս համայնքի ղեկավար ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ, որի անունից 11/04/2015թ. տրված թիվ 641 լիազորագրով հանդես է գալիս ԿԱՐԵՆ ԱՐՄԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ, ծնված՝ 21/11/1988թ., անձնագիր՝ AG0476096, տրված 041-ի կողմից, տրման ամսաթիվը՝ 01/06/2005, հաշվառված ք. Կապան Ս. Պապյան փ. 16 շ. 34 բնակարանում և «ՀՀ ԶԱՐԱԶԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱՐԿԸ, այսուհետև «ՎԱՐՉԱԿԱՆ», իրավաբանական անձի պետական գրանցման վկայական՝ F004792, ի դեմս ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ղեկավար ՎԱՐԴԱՆ ՆԻԿՈՅԱՆԻ, որը գործում է կանոնադրության հիման վրա, որի անունից 02/02/2015թ. տրված N 02/25.11/309-15 լիազորագրով հանդես է գալիս ՀՀ քաղաքացի ՍԱՐԻԿ ՌՈՍԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ, ծնված՝ 01/01/1961թ., անձնագիր՝ AF0272840, տրված 041-ի կողմից, տրման ամսաթիվը՝ 05/04/2001, վավերական է մինչև 05/04/2016, հաշվառված ք. Կապան Ս. Պապյան փ. 22 շ. 17 բնակարանում, հիմք ընդունելով 27/03/2015թ. համայնքի ավագանու 27-Ա և 03/04/2015թ. համայնքի ղեկավարի 368-Ա որոշումները, կնքում են սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.Սույն պայմանագրով «Վարձատուն» պարտավորվում է վճարի դիմաց «Վարձակալի» ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել Սյունիքի մարզի Կապան համայնքի Շահումյան փողոցի 6/38 /վեց կոտորակ երեսուկութ/ հասցեում գտնվող 66,81 /վաթսուվեց ամբողջ ութսունմեկ/ ք.մ. մակերեսով տարածքը, իր կանոնադրությամբ նախատեսված գործունեությունն իրականացնելու նպատակով:

2.Նշված անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է «Վարձատունին», 14/07/2008թ. անշարժ գույքի կադաստրի Կապանի տարածքային ստորաբաժանումից տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականով՝ թիվ 2372647:

3.Նշված գույքը պայմանագրի ձևակերպման պահին վաճառված չէ, գրավի, արգելանքի, կալանքի տակ չի գտնվում կամ այլ կերպ օտարված չէ, որը հաստատված է 10/04/2015թ. ՀՀ ԿՄ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի «Կապան», սպասարկման գրասենյակից տրված N US-10042015-09-0045 միասնական տեղեկանքով:

4.Սույն պայմանագրից բխող իրավունքները և պարտականությունները տարածվում են կողմերի վրա սկսած սույն թվականի ապրիլի մեկից մինչև երկու հազար տասնութե թվականի ապրիլի մեկը:

5.Տարածքի ամսական վարձավճարը կազմում է 26,730 /քսանվեց հազար յոթ հարյուր երեսուն/ դրամ:

6.Կողմերի համաձայնությամբ սույն պայմանագիրը կարող է դադարեցվել ժամկետից շուտ:

7.Պայմանագրի տևողության ընթացքում վարձավճարի սակագները և ժամկետը փոփոխման ենթակա են կողմերի համաձայնությամբ:

II ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարձատուն իրավունք ունի՝

1. Վարձակալից պահանջել գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին համապատասխան:

2. Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Վարձակալը Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան:

Վարձատուն պարտավոր է՝

3. Գույքը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում:

4. Վարձակալին նախազգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին:

Վարձակալն իրավունք ունի՝

5. Պահանջել Վարձատուից սույն պայմանագրի կնքման պահից իրեն հանձնել Գույքը (փոխանցման ակտով):

Վարձակալը պարտավոր է՝

6. Ժամանակին վճարել գույքն օգտագործելու համար նախատեսված վճարը (վարձավճարը):

7. Պայմանագիրը կարող է լուծվել վարձատուի պահանջով, եթե պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծվել վարձավճարը:

8. Պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով դրա բնական մաշվածությունը:

9. Իր մեղքով վարձակալած գույքին հասցված վնասը վերականգնել սեփական միջոցներով:

10. Ապահովել իր զբաղեցրած գույքին (տարածքին և շինությանը) հարող ընդհանուր օգտագործման տարածքի հակահրդեհային, սանիտարական պատշաճ վիճակը և ճարտարապետական տեսքը:

11. Վարձակալն իրավունք ունի տարածքը հանձնել ենթավարձակալության միայն Վարձատուի համաձայնությամբ:

III ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Վարձակալության ժամանակահատվածում կոմունալ վճարումները (էլ. էներգիա, ջրամատակարարում, գազ, աղբահանություն, և այլն) կատարվելու են Վարձակալի կողմից:

2. Սեփականության իրավունքի փոխանցումը այլ անձի հիմք չէ վարձակալության պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

3. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած վեճերը կարգավորվում են համաձայն գործող ՀՀ օրենսդրությանը:

4. Սույն պայմանագրի ձևակերպման հետ կապված ծախսերը կատարվում է , ՎԱՐՁԱԿԱԼԷ, կողմից:

5. Պայմանագիրը կնքված է համարվում կողմերի ստորագրման պահից և իրավական ուժ է ստանում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

6. Պայմանագիրը կազմված է 4./չորս/ օրինակից, որից մեկ օրինակը պահվում է ՎԱՊԱՆ նոտարական տարածքում, իսկ մյուսները տրվում են կողմերին: Օրինակների միջև

հակասությունների դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին:

7.Սույն պայմանագրից ծագող իրավունքները 30-օրյա ժամկետում ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում:

„ՎԱՐՁԱՏՈՒ,,

Կապանի համայնք, ի դեմս համայնքի

ղեկավար Ա.Հայրապետյանի լիազորված անձ՝

„ՎԱՐՁԱԿԱԼ,,

«ՀՀ ԶԱՂԱԶԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱՐԿ,

ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ. Նիկոյանի լիազորված անձ՝

երկու հազար տասնհինգ թվականի ապրիլի տասնմեկին

Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Կապան նոտարական տարածքի նոտար ՎԻԵՆԱ ԿԱՄՈՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՍ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները ստուգված են: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածի համաձայն սույն պայմանագրից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Գրանցված է սեղանահատյանում 990

Գանձված է պետական տուրք 5000 դրամ և ծառայության վճար 15000 դրամ համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Նոտար՝



Վիենա Հայրապետյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՍԱՐ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ**

Սույն վկայականով հաստատվում է «16» Ապրիլի 2015 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱԿՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՀՀ Զաղաքաշինության նախարարություն ՀԻՆԱՐԿ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆԿԵԼՈՒ ԿԱՅՐԸ ԵՎ ԱՆԿԱՆՈՒՄԸ

Սարգ Սյունից, համայնք Կապան Շահումյան փողոց 6/38 տարածք

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՍՔ ՀԱՆԴԻՍԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի՝ տարածքի վարձակալության պայմանագիր 11/04/2015թ.ս/մ 990

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝


Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	09-001-0513-0001-002-041	Տարածք	66.81 ք.մ.	ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Սույն վկայականը հանդիսանում է 16042015-09-0006 վկայականի ուղղված տարբերակը:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Անդրանիկ Աթայան զբաղեցրած պաշտոնը՝ Սյունիքի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր:

Կ.Տ.



Համաձայնագիր N1

01 02 1 76 4
Կարճ

11.04.2015թ. կնքված ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ՝ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Հայաստանի Հանրապետություն Սյունիքի մարզ քաղաք Կապան
Երկու հազար տասնհինգ թվականի հունիսի քսաներկուսին

<<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկն, այսուհետև՝ <<Վարձատու>>, ի դեմս համայնքի ղեկավար Աշոտ Հայրապետյանի, որի անունից 01.06.2015թ. տրված լիազորագրով հանդես է գալիս Էրիկ Սոսի Նուրիջանյանը, ծնված՝ 20.08.1986թ., անձնագիր՝ AF0745198, տրված 041-ի կողմից, տրման ամսաթիվը՝ 20.06.2003թ., վավերական է մինչև 20.06.2018թ., հաշվառված ք. Կապան, Գ. Նժդեհ 1 նրբ., 36 տանը և <<< քաղաքաշինության նախարարության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (ք. Երևան, Կառավարական տուն 3), այսուհետև <<Վարձակալ>>, ի դեմս << քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Էդգար Գևորգյանի, որի անունից 15.05.2015թ. տրված թիվ 16.3/2543-15 լիազորագրի հիման վրա հանդես է գալիս << քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի գլխավոր մասնագետ-քաղաքաշինական պետական տեսուչ՝ Սարիկ Ռոմենի Հարությունյանը, մ ծնված՝ 01.01.1961թ., անձնագիր՝ AF 0272840, տրված 041-ի կողմից, տրման ամսաթիվը՝ 05.04.2001թ., վավերական է մինչև 05.04.2016 թ, հաշվառված ք. Կապան, Մ.Պապյան փողոց, 22 շենք 17 բնակարանում, ղեկավարվելով << քաղաքացիական օրենսդրությամբ, ինչպես նաև հիմք ընդունելով 11.04.2015թ. կնքված <<ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ՝ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ>> պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1.2 Պայմանագրի՝ << ՈՒ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ >> բաժինը շարադրել նոր խմբագրությամբ.

<< ՈՒ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարձակալը իրավունք ունի՝

1. Եթե մատուցվել է սույն պայմանագրին չհամապատասխանող Ծառայություն կամ գույքի օգտագործման ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը կամ թերությունները վերացնելու ողջամիտ ժամկետ և պահանջել Վարձատուից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Վարձատուին և վճարելով հրաժարման արդյունքում տուգանք՝ պայմանագրի տարեկան գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

2. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Վարձատուն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Վարձատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

3. Պահանջել Վարձատուից սույն պայմանագրի կնքման պահից իրեն հանձնել Գույքը բարավոր վիճակում հանձնման-ընդունման ակտով:

Վարձակալը պարտավոր է՝

4. Քննարկել և ընդունել սույն պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքները, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Վարձատուին:

5. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Վարձատուին վճարել վերջինիս վճարման գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրով նախատեսված տույժը:

6. Գույքը օգտագործել պայմանագրի պայմաններին և նշանակությանը համապատասխան, ապահովել իր զբաղեցված գույքին (տարածքին և շինությանը) հարող ընդհանուր օգտագործման տեխնիկական, սանիտարական պատշաճ վիճակը և ճարտարապետական տեսքը:

7. Իր մեղքով վարձակալած գույքին հասցված վնասը վերականգնել սեփական միջոցներով:

Վարձատուն իրավունք ունի՝

8. Վարձակալից պահանջել գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին համապատասխան Պայմանագրի գործողության ժամկետի լրանալուց հետո պահանջել ազատել զբաղեցրած տարածքը:

9. Վարձակալից պահանջել վճարելու վարձակալության ծառայության համար վճարման գումարները:

10. Ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն առաջ տեղեկացնելով Վարձակալին և վճարելով սույն պայմանագրում նախատեսված տուգանքը:

Վարձատուն պարտավոր է՝

10. Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցմանը Վարձակալին տրամադրել հանձնման-ընդունման ակտով, սույն պայմանագրի պայմաններին և նշանակությանը համապատասխան, ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

11. Վարձատուն ցանկացած ժամանակ պայմանագրի կատարումից հարաժարվելու դեպքում պարտավորված վճարելու սույն պայմանագրով նախատեսված տուգանքը:

12. Ծառայության արդյունքը ներկայացնել Վարձակալին հանձնման-ընդունման արձանագրության միջև՝ սույն պայմանագրով սահմանված ժամանակացույցով, իսկ ժամկետի խախտման դեպքում վճարել սույն պայմանագրով նախատեսված տույժը:

13. Վարձակալին նախազգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին:

1.3 Պայմանագրում սահմանել ներքոնշյալ II-1, II-2, II-3, II-4 բաժինները՝

<<II-1 ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Վարձատուի և Վարձակալի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ:

2. Վարձատուն ծառայության մատուցման ավարտից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Վարձակալին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

3. Վարձակալը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վարձատուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

II-2 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

1. Սույն պայմանագրով նախատեսված մատուցման ենթակա վարձակալության ծառայության մեկ ամսվա վարձը կազմում է **26730 (Քսանվեց հազար յոթ հարյուր երեսուն)** ՀՀ դրամ, իսկ տարեկան վարձավճարի տարեկան գինը կազմում է **320760 (երեք հարյուր քսան հազար յոթ հարյուր վաթսուն)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Վարձատուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2. Ոչ լրիվ վճարային ժամանակահատվածի համար վարձավճարը հաշվարկվում է տվյալ ամսվա վարձակալական օրացուցային օրերի քանակին համամասնորեն:

3. Վարձակալը իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրով սահմանված ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Ընդունված Ծառայության դիմաց վճարումը կատարվում է հավասար չափերով՝ ըստ տարվա օրացուցային եռամսյակների, իսկ վերջին վճարումը կատարվում է ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ը:

II-3 ԿՈՐՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Վարձատուն պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

2. Սույն պայմանագրով նախատեսված վարձակալության Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Վարձատուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

3. Սույն պայմանագրի նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են վարձակալության ծառայություն մատուցելու արդյունքում Վարձատուին վճարման ենթակա գումարներից:

4. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար ենթակա են պատասխանատվության ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

II-4 ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին: >>>:

1.3 Պայմանագրի՝ «**ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**» բաժնում ավելացնել 8 և 9 կետերը:

<<8. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության կամ բողոքների քննության

արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վարձաներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վարձատուին ընտրելու որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմք հայտ գալուց հետո Վարձակալը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը համար: Ընդ որում, Վարձակալը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վարձահամար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վարձատուն պարտավորված է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Վարձակալի վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Վարձատուի ստացածով:

9. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա միակողմանի անբաժանելի մասը: Վարձակալության ծառայության ժամկետը կարող է երկարացվել միայն այն դեպքում, երբ լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանագրի վերացել վարձակալության ծառայությունից օգտվելու պահանջը: Սույն կետում նշված փոփոխությունները լրացումները ենթակա են նոտարական վավերացման և դրանից ծագող իրավունքների գրանցման: >>>:



2.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Կողմերի 11.04.2015թ. կնքված Պայմանագրի անբաժանելի մասը:
- 2.2 Սույն համաձայնագիրը կնքված է 4 /չորս/ օրինակից, որից մեկ օրինակը պահվում է նոտարական տարածքում, իսկ մյուսները տրվում են կողմերին:
- 2.3 Սույն համաձայնագիրը ենթակա է նոտարական վավերացման:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները


Վարձակալ
 ՀՀ քաղաքաշինության նախարարություն
 Հասցե՝ Կառավարական տուն թիվ 3
 հհ 900011014363, ՀՀ ՖՆ աշխարհակազմի
 գործառնական վարչություն
 ՀՎՀՀ 02565827

Վարձատու
 Կապան քաղաքային համայնք
 Հասցե՝ Բ. Կապան, Ա. Մանուկյան 5
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 900315201088
 ՀՎՀՀ 09402451

Լիազորված անձ՝
 _____ Ս. Հարությունյան

Լիազորված անձ՝
 _____ Է. Նուրիջանյան

Սույն համաձայնագիրը կնքվել է իմ Կնքման նոտարական տարածքի նոտար ՎԻԵՆՆԱ ԿԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՍ կողմից: Համաձայնագիրը կողմերի ստորագրել են իմ ներկայությամբ: Ինքնությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայությունները ստուգված են:



Գանձված է անձնական և տնտեսական կապերի նախարարության վճար
 ԿԱՊԱՆ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ _____ 1991
 Կ.Կ.ԱՅՐԱՊԵՏՅԱՆ